

Հրատարակչատան կողմէ

Լեռ Կամսար, իսկական անունով Արամ Թովմաղեան, եզակի անուն մըն է սովետահայ գրականութեան մէջ: Ըլլալով Պարոնեանի ու Օտեանի անուններով բնորոշուող հայկական երգիծական գրականութեան ամենաուշագրաւ դէմքերէն մէկը, դառնապէս ճաշակած է սովետական բռնաշապիկին ճնշումը իր գործին եւ իր գոյութեան ալ վրայ:

Աքսոր, անտեսում, ստեղծագործութիւններու հրկիզում, ամբողջական արգելում եղած են Լեռ Կամսարի կենսագրութեան հիմնական տարրերը: Ան սակայն շարունակած է գրել գաղտագողի, արտադրած է մշտապէս.

«հոգիի տաժանակրութիւն», իր իսկ բառերով:

Լեռ Կամսարի ստեղծագործութիւնը խորհրդային կայսրութեան փլուզումէն ետք է որ միայն պիտի սկսէր բացայայտ դառնալ՝ շնորհիւ իր հարազատներուն կողմէ խնամքով պահպանուած ձեռագիրներուն ու թոռնուհիին՝ Վանուհի Թովմասեանի ջանքերով հրատարակուած յաջորդական հատորներուն: Այս հատընտիրը ճոխ քաղուածքներ կատարած է արխիւային բնոյթ ունեցող յիշեալ հրատարակութիւններէն՝ փորձելով վերականգնել հեղինակին կենդանագիրը՝ մարդկային ու գրական ամբողջականութեամբ:

Հրատարակութեան ու խմբագրութեան վերաբերեալ

**ԼԵՌ ԿԱՄՍԱՐ
ՄԱՐԴԸ ԳՈՐԾԻՆ ՄԷԶԷՆ**

Աքսորականի Գաղտնի Օրագիր

Արաս Հրատարակչություն
A r a s Y a y ı n c ı l ı k
İstiklal Caddesi, Hıdivyal Palas 231/Kat 1
34430 Tünel, Beyoğlu-İstanbul
Tel: (0212) 252 65 18 - 243 06 02
Fax: (0212) 252 6519
www.arasyayincilik.com
info@arasyayincilik.com
Sertifika No: 10728

ARAS - ԱՐԱՍ 262

ԼԵՌ ԿԱՄՍԱՐ ՄԱՐԴԸ ԳՈՐԾԻՆ ՄԷՋԷՆ

Կազմող ու խմբագիր՝
Յարուսթին Քիւրքեան

Հրատարակութեան պատրաստեց՝
Սեւան Տէյիրմենեան

Կողքը պատրաստեց՝
Մելիսա Արսէնեան

Կողքի լուսանկար՝
Լեւոն Փարեան (Levon Parian), Ropeman
Ամերիկահայ արուեստագէտ, որու լուսանկարները կ'ապրին մարդկային
վիճակի փիլիսոփայութեան ու բանաստեղծականութեան միջեւ:

Տպագրութիւն
Սենա Օֆսեթ

Մարտ 2021, Ստանպուլ

ISBN 9786052100950

ԼԵՌ ԿԱՄՍԱՐ ՄԱՐԴԸ ԳՈՐԾԻՆ ՄԷԶԷՆ

Աքսորականի Գաղտնի Օրագիր





ԼԵՌ ԿԱՄՍԱՐ

Վան, 1888-1965, Երեւան

Սերում են նրանք եւ ա՛յն ծերուկից,
Որ նախընտրում էր քնել տակառում:
Սերում են նրանք եւ ա՛յն պատանուց,
Որ սիրահարուեց իր իսկ պատկերին:

Անվտանգ՝ ինչպէս հրդեհն արեւի,
Անվնաս՝ ինչպէս օգտակար լորտուն,
Վախ են ներշնչում պետութիւններին
Մինչեւ իսկ իրենց կամքի հակառակ:

Արքաների հետ խօսում են «դու»-ով,
Եթէ, ի հարկէ, լսում են նրանց,
Իսկ թէ չեն լսում՝ մէ՛կ է, չե՛ն լռի,
Կը խօսեն նոյնիսկ իրենց կօշիկ՝ հետ:

Բայց չե՛ն վախենում նրանք չար մահից.
Ապրում են դժուար ու մեռնում են հեշտ...

«Վարք մեծաց», Պարոյր Սեւակ

ԱՅՍ ՀԱՏՈՐԸ

Ներկայ ժողովածուն, քաղուած հայրենի երգիծաբան Լեո-
Կամսարի վաստակէն, անշուշտ սկզբնապէս կը կազմէ «Հատըն-
տիր» մը*, այսինքն էջերու ամբողջութիւն՝ վերցուած վաստակէ
մը, որոշ արժեհասփերու հիմամբ եւ որոշ ծրագրով՝ սահմանուած
ճաշակ մը հրամցնելու տուեալ հեղինակէն:

Լեո-Կամսարի՝ Արամ Թովմաղեանի կամ Թովմասեանի պարա-
գային, սակայն, հատընտիր հատորի մը կայացումը շատ շուտով
մեզ կը հեռացնէ այս տարրական, ձեւով մը «նուագական» պատ-
կերացումէն...:

Գրագէտին կեանքի պայմանները, ապա վաստակի ստեղծման,
պահպանման եւ աւելի ուշ՝ հրատարակման պայմանները այնպի-
սի են եղած, որ մերինին նման նախաձեռնութիւն մը կը մղեն,
նոյնիսկ կը հարկադրեն՝ ուրիշ դերակատարութեան -աւելի լուրջ
դերակատարութեան մը, մեր համոզումով՝ էական:

Ասիկա՝ նախ՝ որովհետեւ բոլորովին ա՛յլ է եղած Լեո-Կամ-
սարի ճակատագիրը, իբր մարդ ե՛ւ իբր գրագէտ**։ Դաժան ճակա-
տագիրը անխառն վաւերականութեամբ մարդու մը, որ՝ իր ծնըն-
դավայր Վանի մէջ հասակ առած, երիտասարդ՝ գոյամարտի ու
զաղթականութեան կրակներէն անցած, շատ շուտ ճանչցած է
խորհրդային բռնաշապիկի ճնշումը իր գործին, ապա եւ գոյու-

* Գործածած ենք արեւմտահայերէնի մէջ նուիրագործուած այս «Հատընտիր»
եզոյթը՝ արեւելահայերէնի օգտագործած «ընտրանի»ի փոխարէն, հասկա-
լի պատճառով:

** Անձ եւ վաստակ, Լեո-Կամսարի պարագային, շատ աւելի սերտօրէն առըն-
չուած են իրարու, մինչեւ նոյնացում, քան ինչ որ կրնայ դիտուել նոյնիսկ
ամենէն աւելի «անձնական» գրագէտներու մօտ: Այս հաստատումին համար
պիտի բաւէ նկատել, որ վաստակի հիմնական մասը օրագիրն է -ե՛ւ առօրեայ
դիտարկումներու, մտորումներու բազմահուն հանդէս, ե՛ւ երգիծանքի
չնօրհի հիմնալի արձակարան...: Այս հիմնական իրողութենէն թելադրուած
է նաեւ ներկայ հատընտիրի խորագիրը՝ «Լեո Կամսար. Մարդը գործին
մէջէն»:

Հատորը փակող «Յաւելուած» բաժինին մէջ, «Լեո Կամսար. Մարդը գործին
մէջէն» մենագրութիւնը նոյնպէս այս միաձուլումէն է որ կը մեկնի՝ երգի-
ծաբանին մօտ փոխադարձ լուսաւորումի ենթարկելու համար կեանք ու վաս-
տակ:

Թեան՝ իսկ վրայ. որ հեռաւոր հիւսիսի տաժանակիր աքսորէ ետք՝ ճանչցած է նաեւ երկարատեւ ներքին աքսոր՝ Հայաստանի կորսուած մէկ անկիւնը. որ տեսած է՝ հրատարակուած իր գործերու հաւատարմական հրկիզումէն ետք՝ ամբողջական արգելումը նորերու հրատարակման: Եւ որ՝ վճիռէն ետք այլ՝ շարունակած է գրել գաղտագողի, ձեռագիրները, թաղած՝ մառաններու հողէ յատակին ներքեւ, կճուճներու մէջ: Իր իսկ բառերով՝ «հոգիի տաժանակրուծիւն» - ցմահ...

Իր օրին ճանչուած քանի մը «ականագերծուած», նենգօրէն գրաքննուած հրատարակութիւններով միայն, երգիծաբանը Խորհրդային կայսրութեան՝ իր նախատեսած ու սպասած փլուզումէն ետք է որ պիտի սկսէր վայելել վաստակի իսկական բացայայտում - չնորհիւ հարագատներու կողմէ՝ ձեռագիրներու խնամքով պահպանումին, ու թողնուհիւն՝ Վանուհի Թովմասեանի ջանքերով իրագործուած հրատարակման, յաջորդական հատորներով: Նոյն ատեն, մամուլի թէ գրապատմական-գրագատական ոլորտի մէջ, պիտի երեւէին աշխատանքներ՝ նուիրուած վաստակին*:

Այսպէս ուրեմն, յապաղած հրատարակում-ճանաչումը, այդ ճանաչումին ձեւով մը կիսկատար հանգամանքը՝ ե՛լ Հայաստանի, ե՛լ Սփիւռքի տարածքին, կը կազմեն առաջին ազգակը այսպիսի հատընտիր ժողովածու մը ընթացիկէն տարբեր պարտքով բեռնաւորելու:

Բայց կայ եւ աւելի՛ն: Վերջին երկու տասնամեակներուն լոյս ընծայուած հատորները**, տասնեակը անցնող, հայրենի թէ սփիւռքաբնակ ընթերցողը կը դնեն մի քանի հազարեակ էջերու պատկառելի գումարի մը առջեւ: Մարտիրոս գրագէտին նոյնքան մարտիրոսացած ձեռագիրներու ամբողջական հրատարակումը, մտաւորական թէ բարոյական հրամայականներէ բխող, անվիճելի անհրաժեշտութիւն էր ու կը մնայ - նոյնիսկ եթէ, պարագաներու դժբախտ դասաւորումով, հեղինակը չէ ունեցած առիթը վերընթերցելու, վերաձեւաւորելու գանոնք, ի հարկին՝ զեղչումներ ընելու:

* Առաջին լուրջ անգրադարձներէն, կ'արժէ յիշատակել «Ոգնի» երգիծաթերթին՝ Լեւ-Վամսարի նուիրուած բացառիկ համարը (նոյեմբեր, 1988), սակա՛ 1994-ին՝ Պէյրութի «Շիրակ» տպարան-հրատարակչատան լոյս ընծայած «Լեւ-Վամսար. տպուած եւ անտիպ էջեր» ժողովածուն:

** Հրատարակութիւններու ամբողջական ցանկի մը համար, տեսնել «Մատենագիտութիւն», «Յաւելուած»:

Ահա ատոր համար, այս «Հատընտիր»ը, լայն բանալով կարկի-
նը, կատարած է ճոխ քաղուածքներ կիսով արխիւատիպ այդ հը-
րատարակութիւններէն, գրական թէ մարդկային արժեհաստիքով
ջանացած է ընտրել, ժամանակագրականօրէն դասաւորելով, եւ
անշուշտ՝ դասական ուղղագրութեան փոխադրելով* այդ բոլորը,
ձգտելով գուգահեռաբար, իր ձեւով՝ խտացման ու բիւրեղացման
ճամբով, վերականգնել Լեո-Կամսարի մէկ կենդանագիրը՝ մարդ-
կային ու գրական կարելի ամբողջականութեամբ, իր իսկական
տարողութեամբ՝ իրեն խորապէս հոգեհարազատ մի՛ւս մեծին,
Յակոբ Պարոնեանի մը կողքին, անոր հաւասար՝ ճակատագրով՝
ինչպէս մարդկային վաւերականութեամբ եւ գրական արժէքով:

Ներկայ հատորը, բացի անկէ՝ որ իր գոյութիւնը կը պարտի
վերջին քսանամեակի այն մեծ իրագործումին, որ երգիծաբանի
գործին՝ Վանուհի Թովմասեանի կողմէ փրկուած ու տասնեակէ
աւելի հատորներով լոյս ընծայուածն է,- նաեւ ուղղակի՝ երախ-
տապարտ է հաւատաւոր ժառանգորդին, որ ամէն կերպ քաջալե-
րեց մեզ, գործակցելով եւ գործնապէս դիւրացնելով մեր աշխա-
տանքները:

* Հրամայական մը ինքնին՝ դասական ուղղագրութեամբ վերահրատարակումը
Լեո-Կամսարի վաստակին -գոնէ անոր մէկ մասին...:

Բուռն ընդդիմադիր արեղեանական գրելաձեւին՝ երգիծաբանը իր օրագիրին
մէջ մի քանի առիթներով յայտարարած է իր մերժումը «գեղեցտային» այդ
չարափոխումին (որ այլ հարց՝ առաջին քայլ մըն էր դէպի հայ գիրի... լատի-
նացումը):

Կայ եւ աւելի փաստը, վերջերս յայտնաբերուած: Օրագիրի այդ նշումներէն
գուրբ, «Խորհրդային Հայաստան»ի մէջ սահեցուած՝ Լեո Կամսարի մէկ
գրութիւնը, անստորագիր սակայն կատարելապէս ճանաչելի, կը կարգէ նոր
գրելաձեւին դէմ հեղինակի ու պարսաւանքի հիանալի էջ մը (տեսնել հա-
տորի աւարտին՝ «Յաւելուած», «Անհեղինակ գործ մը եւ Լեո-Կամսարի
կնիքը»): Գրութիւնը օրին հրատարակուած է «Բացմամբ»ի փետրուար
1925-ի թիւին մէջ, որ զայն արտատպած է խորհրդային օրաթերթին մէկ չը-
ճղուած համարէն (որ ցարդ կարելի չեղաւ գտնել թերթի արխիւին մէջ):

Կ'արժէ աւելցնել, պարզ՝ առ ի տեղեկութիւն, որ երգիծաբանը մինչեւ յի-
սուական թուականները կը շարունակէր գրել արեւմտահայերէն լեզուաճիւ-
ղով: Ստալինի մահէն ետք, զինք ժլատօրէն հրատարակել սկսելու համար
(թէեւ կցկտուր ու միշտ գրաքննուած), իրեն պարտաբերուել է պայմանը գը-
րելու բացառապէս արեւելահայերէն...: Լեզուն՝ իբր քաղաքական ճնշումի
գործիք մը՝ իր կարգին...:

ԾԻԾԱԼ ՊԱՐԳԵՒՈՂ ՄԱՐԴԸ*

Վանուխի Թովմասեան

Գրականութեան մէջ ամենադժուար ժանրը երգիծանքն է: Այն պէտք է լինի բնատուր, ի վերուստ: Ուսանելով սրամտութիւն՝ երգիծանքի, հումորի արուեստին չես կարող տիրապետել: Այդ է պատճառը, որ մատների վրա կարող ես հաշուել երգիծաբաններին համաշխարհային գրականութեան մէջ:

Այս հազուագիւտ եւ դժուարին ժանրը, եթէ մարդկութեանը բերում է ծիծաղ եւ ուրախութիւն, ապա երգիծանքի մշակների համար, որպէս կանոն, դառնում է Գողգոթայի ճանապարհ: Երգիծաբանը սնւում է զուտ արատներով: Նա իր խորաթափանցութեամբ երեւոյթների եւ մարդկանց մէջ պեղում է թերութիւնը եւ ծաղրելով՝ փորձում է բուժել այն: Իսկ արատները երեսին ասողներին շատ քչերն են հանդուրժում: Աշխարհի տէրերը աշխատում են լռեցնել, արատաւոր մարդիկ ուղղակի ատում են, իսկ անարատներն էլ երեւի թէ շատ քիչ են այս աշխարհում: Այստեղից էլ սկսւում է երգիծաբան անհատի տառապանքը: Եւ որքան սուր է գրիչը, այնքան թարսւում է ճակատագիրը նրա հանդէպ:

Հայ երգիծաբանութեան ամենափայլուն դէմքը Պարոնեանից եւ Օտեանից յետոյ Լեռ Կամսարն էր:

Լեռ Կամսարը, իսկական անուամբ՝ Արամ Թովմաղեան (1921 թուականին փաստաթղթերը սխալմամբ լրացւում է Թովմասեան եւ այդպէս էլ մնում է՝ Արամ Թովմասեան) ծնուել է 1888 թուականի հոկտեմբերի 24-ին՝ Վան քաղաքում, հոգեւորականի ընտանիքում: Սկզբնական կրթութիւնը ստացել է տեղի ամերիկեան վարժարանում: Հայրը՝ Տ. Թովմասը, մտադրութիւն ունենալով որդուն էլ դարձնել հոգեւորական՝ 1902 թուականին ուղարկում է Էջմիածին՝ Գէորգեան ճեմարանում ուսանելու**:

* Առնուած է «Կարմիր օրեր» հատորէն (տե՛ս անդ, էջ 5): Կատարուած են փոքր գեղջումներ:

** Ծանօթագրութիւն Վ. Թովմասեանի.- Իմ յետագայ պրպտումներն ապացուցում են, որ Կամսարի հայրը մահացել է, երբ նա ութ տարեկան է եղել:

1909 թուականին աւարտելով ճեմարանը՝ Արամ Թովմասեանը վերադառնում է իր ծննդավայրը եւ աշխատում որպէս ուսուցիչ՝ նշանաւոր Երամեան դպրոցում: Գրել սկսել է 1910 թուականից:

Լեռ Կամսարի առաջին ֆելիետոնն իսկ, որը 1910 թուականին Տաճկաստանում պայթեց թուրք փաշայի եւ ամերիկեան միսիոներներին գլխին, գովասանքի ու շնորհաւորանքի մէջ խեղդեց հեղինակին: Թուրք նահանգապետից սկսած՝ մինչեւ հայ վերջին ընթերցողը շնորհաւորեցին նրա այդ յաջողութիւնը:

Դեռ մանկուց սիրելով Կամսար անունը՝ Արամ Թովմասեանը հրատարակում էր իր առաջին շրջանի ֆելիետոնները այդ անուան տակ: Մի անգամ Վան քաղաքի երեւելիներից մէկը, տեսնելով Կամսարին փողոցում, շնորհաւորում է նրան հերթական երգիծական պատմուածքի համար եւ գովեստի խօսքը ուժգնացնելու համար տմբտմբացնելով նրա կոնակին՝ ասում է. «Կամսար չէ, մե՛ծ Կամսար, լե՛՛ն Կամսար»: Այդ օրուանից էլ մկրտում է նրա գրական անունը՝ Լեռ Կամսար:

Հետագայում հեղինակը կը գրի.

«Ես, որ գրական ասպարէզ մտնելիս “Լեռ Կամսար” անունն առի վրաս, երբեք մտքովս չանցաւ, որ այդ անունը այսօր սաստիկ պէտք պիտի գար ինձ, որ այսօրուայ իմ կեանքը ես պարտական պիտի լինեմ այդ անուանը:

«Որովհետեւ, եթէ այն ժամանակ ինձ “Լեռ” չանուանէի ու ասենք “հաստաբուն կաղնի” անուանէի անգամ, սա 40 տարուայ իմ վրայ փչող քամին արմատահան պիտի անէր ինձ եւ հողմավար տանէր, ինչքան էլ “հաստ” բուն ունենայի:

«Ես անպայման “Լեռ” պիտի լինէի դիմանալու համար այս ամէն տեսակ գլխիս ոռնացող քամիներին ու փոթորիկներին:

«Եթէ “Լեռ” չլինէի, հիմա չկայի:

«Փա՛նք քեզ, անուն, որ փրկեցիր ինձ կորստից...»:

Վրայ հասաւ Առաջին համաշխարհային պատերազմը:

1915 թուական...

Այնպէս որ 1902 թուին նա չէր ճեմարան ուղարկողը: Թովմասեան երկու եղբայրներին՝ Խրիմեանի նամակով են ընդունել ճեմարան:

Աշխարհի լուռ համաձայնութեամբ մորթում էր մի ողջ ժողովուրդ: Արեւմտեան Հայաստանում համատարած կոտորած էր եւ տեղահանում:

Վասպուրական աշխարհը որոշեց դիմակայել:

Վանը մէկ ամիս հերոսաբար կանգնած էր արիւնարբու հրոսակախմբերի առջեւ: Լեռ Կամսարի տունը հարեւան Սահակ Պէյենց տան հետ դարձաւ Վան-Այգեստան ինքնապաշտպանութեան կարեւոր դիրքերից մէկը, ուր երգիծաբանն իր ընկերների հետ միասին անձնագոհ քաջութեան օրինակներ էր ցոյց տալիս: Վանի միամետայ հերոսամարտը փրկեց վասպուրականցիներին խուժանի կոտորումից:

Սակայն պայքարն անհաւասար էր, եւ վանեցիները ստիպուած էին գաղթել:

«Երբ եկաւ 1915 թուականը, պատահեց Հայոց պատմութեան մէջ չպատահած դէպք: Թուրք կառավարութիւնը, որ սովորութիւն ունէր տասը տարին մէկ քաղհանել Հայութիւնը, սէյրակացնել, այս անգամ տրակտորը լծեց ու ողջ Տաճկաստանը հերկեց այնպէս, որ հայի հոտը կտրուի այդ երկրից, եւ մենք գաղթեցինք:

«Գաղթը» անձամբ չճաշակողի համար հասարակ անուն է եւ գրուում է փոքրատառ, իսկ անձամբ ճաշակողի համար դա յատուկ անուն է եւ աշխարհում միակը:

«Այն ժամանակ, երբ մի թեթեւ բեռ շալակդ առած, ծերունի մօրդ ձեռքը բռնած, դուրս ես գալիս քո հայրենի տնից եւ մի վերջին անգամ ետ ես նայում կտրելու համար այն անթիւ անըմբռնելի թելերը, որ քեզ կապում է քո հայրենի տանը, քո պապերին, պապի պապերին, այն ամբողջ քաղցր յուշերին, որոնցով ապրում էիր մինչեւ այդ վայրկեանը, դու, երբ մի խորունկ անխ ես քաշում ու երես դարձնում այդ բոլորից, այն ժամանակ ես զգում միայն, թէ ինչ բան է գաղթը...»:

Գաղթելով Անդրկովկաս՝ սկսում է աշխատակցել կովկասահայ պարբերականներին եւ անմիջապէս գրաւում է ընթերցողների ուշադրութիւնն ու համակրանքը: Բաքուի «Արեւը» իր տարեկան տեսութեան մէջ գրում է. «Կովկասահայ թերթերում բազմաթիւ ֆելիետոնիստներ կան, բայց դրանցից միակ օժտուածը Լեռ Կամսարն է: Միայն ցանկալի է, որ նա լրագրական մանր յօդուածներից յետոյ փորձէր երգիծական մեծ կտաւների անցնել»:

Եղիշէ Չարենցը, որը այդ տարիներին մտերմացել էր երգիծաբանի հետ, յորդորում է վերջինիս դաշնակցական խմբապետների կեանքից մի «Դոն Բիչոտ» գրել:

Սակայն Լեռ Կամսարը նախընտրում է երգիծական մանրապատումը: Նրա տաղանդաւոր գրիչը փոքրիկ կտաւներով էլ կարողանում է արծարծել մեծ իրադարձութիւններով հարուստ իր ժամանակաշրջանի կեանքի բարդ եւ կարեւոր հարցերն ու պրոբլեմները: Կարելի է միայն զարմանալ եւ հիանալ, թէ նա ինչպիսի ճկունութեամբ եւ վարպետութեամբ է մի տասը տողանոց Ֆելիետոնում կարողանում միանգամից անդրադառնալ մի քանի խնդիրների, ընդ որում՝ իրար հետ կապ չունեցող:

Հիմնական թիրախին խփելու համար նա սկսում է այնքան հեռուից, որ մտքովդ էլ չի անցնում՝ վերջում այդպիսի շրջադարձ կարող է լինել, այդ հեռաւորութիւնը անցնում է մի ակնթարթում՝ ճանապարհին խոցելով մի քանի չարիքներ եւ ընթերցողին անակընկալի բերելով՝ հարուստում է նշանակէտին:

«Գրական երկի արժանիքը նրա ծաւալով չի պայմանաւորուած: Ինչպէս վարժ լողորդը խորունկ ջուր է որոնում ազատ լողալու համար, այնպէս էլ ընթերցողն անկախ ծաւալից՝ խորը մտքերի մէջ է ուզում թաղուել: Երբ ես իմ ջրով եմ խեղդում ընթերցողին, աւելորդ ջուրը ի՞նչ անեմ»:

Լինելով հայրենասէր եւ չկարողանալով անտարբեր մնալ երկրի քաղաքական իրադարձութիւններին՝ Լեռ Կամսարը մարտնչում էր ե՛լ իր սուլին-գրչով, ե՛լ գէնքով՝ 1917 թուականին կամաւոր հաւաքագրուելով Վանի 4-րդ գնդում՝ գնդապետ Տիգրան Բաղդասարեանի հրամանատարութեան տակ:

1918 թուականին Սարիղամիշի ճակատամարտի կամաւորների մէջ էր երգիծաբանը. սակայն Դրօն արգելում է նրան կռուին մասնակցել՝ ասելով. «Քեզ որ մի բան պատահի, բա մեզ ո՞վ է ծաղրելու, գնա՛, ա՛յ մարդ, գնա՛, քո գործն ուրիշ է, դու քո գործով զբաղուիր»: Հայ յեղափոխական դաշնակցութիւնը, որն այդ տարիներին իշխանութեան գլուխ էր անցել, զարմանալի հոգատարութիւն եւ հանդուրժողականութիւն էր ցուցաբերում նրա սուր գրչի նկատմամբ: Միշտ սիրով եւ յարգանքով էին վերաբերում երգիծաբանին եւ շատ էին ցանկանում, որ նա դառնայ

խորհրդարանի անդամ, բայց Լեո Կամսարը մերժում էր՝ ասելով, որ ինքը գրելով աւելի օգտակար կը լինի իր ժողովրդին:

Այդ տարիներին չկար մի հայ խմբագիր, որից Լեո Կամսարը հրաւէր ստացած չլինէր իր թերթին աշխատակցելու: Այսպէս մինչեւ 1920 թուականը, երբ Հայաստան մտան բոլշեւիկ «ազատարները»՝ մնացած հայութեանը «փրկելու» համար:

«Մեզ պարզեւած ազատութեան մասին մի պարզ գաղափար տալու համար ասեմ, որ հետագայում, երբ 21 թուականին հայերը ապստամբեցին իրենց “ազատարները” դէմ, պարտուած հայութիւնը նորից թուրքիա էր փախչում՝ տաճկական սուրը գերադասելով բոլշեւիկների կացնից:

«Բոլշեւիկեան Հայաստանը մի կատարեալ սառցատուն էր, որտեղ հայութեան ուղեղը սառեց իր գանգում՝ բնավ չմտածելու համար, արիւնը սառեց բազուկներում՝ բնաւ չաշխատելու համար»:

«Կարմիր բարերարներից» Լեո Կամսարը փախաւ եւ հաստատուեց Թաւրիզում: Դաշնակցութիւնը այստեղ էլ նեցուկ եղաւ իր անողոք ընդդիմախօսին: Մէկ օրուայ մէջ գրողը ապահովուեց թէ՛ աշխատանքով եւ թէ՛ բնակատեղով: Սկսեց ներկայացնել իր պիէսները թատրոնում, ունէր մեծ յաջողութիւններ, բայց հայրենիքի եւ ընտանիքի կարօտը տանջում էր երգիծաբանին: Եւ մի քանի ամիս յետոյ, ընդունելով խորհրդային Հայաստանի հրաւէրը, նորից վերադառնում է:

«Ախ, Պարսկաստան... ազատ երկիր, աւանակը բոլ: Մօ՛, յիմար, ասա՛ ինչո՞ւ վերադառնամ զնդան, վերցրու մի երկու աւանակ, դարձիր էշակչի, բեռներ մի տեղից միւսը փոխադրիր ու որպէս հասարակական գործիչ՝ փառք վաստակիր, ի՞նչ գործ ունես սովետական երկրի հետ, ուր քեզ պիտի հեծնեն, ու ընկնես անհաս կոմունիզմի ետեւը»:

Այս եզրայանգմանը երգիծաբանը կը դայ դեռ յետոյ, մի քանի տարի անց: Իսկ հիմա գրողը աշխատանքի կ'անցնի «խորհրդային Հայաստան» թերթում, կը դառնայ երգիծական բաժնի գլխաւոր աշխատակիցը: Գրքեր կը հրատարակի. 1924 թուականին լոյս կը տեսնի «Անվաւեր մեռելները», 1926 թուականին՝ «Ազգային այբբենարանը», 1934-ին՝ «Վրիպած արցունքները»:

Այդ տարիներին Աւետիք Իսահակեանը գրում է Փարիզից. «Դու